մը կըրնան ձևացընել։ Այսպիսի է ա-նուանի հնդկաթզենին յափունս ներ-պուտտայ 'ի Հնդկաստան. այս ծառս զոր ասկէ 2200 տարի առաջ տեսաւ Մեծն Ալեքսանդր՝ դեռ ողջ է. 350 մեծ բուն ունի, 3000էն աւելի ալ պզտիկ. որք 2000 ոտք տեղ կը շրջապատեն, և որոց տակ 7000 զօրաց գունդ մը բա-նակեցաւ։ — Ասոր նման է և մանգլե-նին. որ և այս բանիս համար՝ արմատա-ծառ կը կոչուի, հազիւ քանի մ'ոտք գետ-նէն բարձրացած՝ նոր արմատներ կ'ար-ձրկէ 'ի ճախճախուտն, (վասն զի այս-պիսի տեղ կը բուսնի), որք զինքն ա-ւելի կը հաստատեն, և գագաթներէն մէկմէկ ճիւղ կու տան. այս կերպով մեծամեծ կոյս անտառներ կը ձևացը-նէ. և իր երկու և կէս ոտնաչափ մեծա-մեծ կաղամբաձև պտուղները կը կախէ ինչուան ջրոց երեսը. այս պտուղներէն ալ նոր արմատներ կ'ելնեն, և տեղը ալ աւելի խիտ և անթափանց կ'ընեն, յար-մար 'ի բնակութիւն կոկորդիլոսաց և օձից։ Ուրիշ բուսոց ալ սերմն կամ հունտերն շատ ծանր ըլլալով՝ չեն ցրուիր 'ի հովէն, և մօտ տեղուանք ընկնալով հոն կը բուսնին, և այնպէս կը հաստա-տուի ընկերակցութիւնն։

Ահա այս պատճառներով կը ձևա-նան հասարակութիւնք անտառաց, խոտ-տոց, խարձից, մամռոց, անպիտան խոտ-տոց և մօռից։ Այրեցեալ գօտւոյն տակ բուսոց ընկերակցութեան չյաջողելուն մէկ պատճառն է՝ ծառոց իրենց տակ եղած ճիւղերը խղդելն, զրկելով 'ի լու-սոյ՝ որոյ կարօտին շատ բոյսք առ 'ի զտել ածխային թթուն։ Իսկ որոնք որ առանց լուսոյ ուղղակի ներգործու-թեան ալ կըրնան զայն լուծել՝ շուքի տակ ալ կ'ապրին, թէ կոյս անտառաց մէջ թէ ուրիշ կողմեր. թուի թէ ասոնք իրենց ածխային թթուն կը լուծեն ներ-գործութեամբ այն կանաչ լուսոյ՝ զոր կ'արձրկէ մամռոց կապերտն, և կամ թէ շուքն իրենց այնպիսի չափաւոր բա-րեխառնութիւն մը տաքութեան կու տայ՝ որ կարենայ իրենց նիւթոյ փոփո-խութիւնն անվտանգ կատարուիլ։

ԼԵԱՌՆ ԲՈՐԲՈՔԵԱԼ.

Երկու դար կայ որ Սաարպրիւք քաղ-քին մօտերն եղող Սաար հովտին ածխահանքն երևելի եղած է, և պատ-ճառն է որ այս կողմերս եղող լե-ռանց միոյն վրայէն ասկէ երկու դար առաջ ճերմակ մոխրագունի զարկած մուխ մը սկսաւ վեր ելլալ, որ և մինչև ցայսօր կը շարունակէ անընդհատ։ Եւ ելած մուխն ոչ թէ գործաւորաց ածուխ հանելու համար բացած ճեղքուածքնե-րէն, այլ լերան զառ 'ի վայրին վրայ ե-ղած բնական պատառուածքէն կ'ել-լայ։

Մուխին հոտը բոլորովին նոյն է քարե-ղրոյ հոտոյն հետ, և ինչպէս կ'երևայ մեր առաջիկայ պատկերէն, 'ի բաց առեալ անմիջապէս մերձաւոր տունկերն, շատ մեծ ճնաս մը չըներ նոյն կողման տնկոց։ Մինչդեռ շատ աւելի հեռու տեղուանքն դաշտերն մերկ և ծառերն տերևաթափ են, հոս լեռան վրայ ամենայն ինչ կար-ծես 'ի գարնան այնպէս լաւ վիճակի մէջ է։ Ոչ սառ կ'երևի և ոչ ձիւն. խոտալից գետիններ և կանաչազարդ ծառեր. թէ-պէտ ճշմարիտն ըսելով, այս ծառոց տե-ռևներն քիչ մը դեղնութեան կը զար-նեն, որ շատ այնչափ զօրաւոր կենդա-նութեան մը նշան չէ։

ՆՈՐ ԵՒ ՄԵԾ ՋՐՎԷԺ ՄԸ. — Ամերիկայ Անգ-ղիական Կույանա աշխարհին մեծ գետերուն քննութեան վերակացուն՝ Պ. Պրաուն, Մասսա-րունա գետոյն աղբերաց մօտ տեսաւ, իբրև 30 մղոն հեռուէն, յորդահոս գետոյ մը թափուածք Ռերաիմա կոչուած լերանց քարաժայռերէ, որ 2000 ոտք բարձր է՝ն, և ինչուան հիմայ դեռ մարդկանցմէ անկոխ կարծուին, ամեն կողմէ ալ սեպացեալ ըլլալով. գագաթն տափարակ է և ընդարձակ կ'երևի։ Տեղացի Ամերիկացիք կ'ըսեն թէ թափուած գետն է Գարուանի կոչուածն, օ-ժանդակն Օրինոգոյ. ժայռերէն վար ընկնալէն վերջն ալ՝ 3000 ոտք զառիվայր գետնի վրայէն սա-հելով կ'անցնի ջրվէժն։